« Երիտասարդ ձեռներեցներ Հայաստանի մարզերում» ծրագրի ֆինասավորման համար ընտրված նախաձեռնություններ

Տավուշի ԵԲ կոմիտե

1. Գյուղական (ֆերմերային) տուրիզմ, Աշոտ Ղալումյան, գ. Սևքար
2. Ֆուրշետ ծառայությունների մատուցում, Աշխեն Պետրոսյան, ք. Իջևան
3. Փայտի գեղարվեստական մշակում, Սուրեն Բեգլարյան, ք. Իջևան
4. Կոշիկի վերանորոգում, Հայկ Մինասյան, ք. Իջևան
5. Ձեռքի աշխատանքներ, Մարինե Խաչիկյան, գ. Կոթի

Վանաձորի ԵԲ կոմիտե

1. Gargar-xerox, Վարսենիկ Քալաշյան, գ. Գարգառ
2. Թեյի և սուրճի մասնագիտացված խանութ, Անդրանիկ Գևորգյան, ք. Վանաձոր
3. Կոշիկի արտադրություն, Տարոն Էլիզբարյան, ք. Վանաձոր
4. Ստեղծագործական արվեստանոց, Թամարա Մանուկյան, ք. Վանաձոր
5. Անարատ մեղր, Սուրեն Հարությունյան, գ. Ձորագյուղ

Արմավիրի ԵԲ կոմիտե

1. Ֆուրշետ, Ազնիվ Մանգուշյան, ք. Արմավիր
2. Գեղեցկության սրահ, Ժենյա Հակոբյան, ք. Արմավիր
3. Մուլտհերոս, Էմմա Աշխատոյան, ք. Արմավիր
4. Օնլայն Մարկեթինգ, Ասատուր Մարտիրոսյան, ք. Արմավիր

Մարտունի ԵԲ կոմիտե

1. Հյուրատնային բիզնեսի աջակցություն, Արփինե Գյուլումյան, գ. Գետիկ
2. Բեմական հագուստի վարձույթի սրահ, Աստղիկ Գալստյան, ք. Մարտունի

Արարատ ԵԲ կոմիտե

1. Ձոդման ապարատ, Արմեն, ք. Արարատ
2. Ֆոտոստուդիա, Արթուր, ք. Արարատ
3. Ակնոցների խանութ, Արմեն, ք. Արարատ

Տավուշի ԵԲ կոմիտե

1. Գյուղական (ֆերմերային) տուրիզմ, Աշոտ Ղալումյան, գ. Սևքար

Խումբը Աշոտ Ղալումյանի գլխավորությամբ զարգացնելու է գյուղական (ֆերմերային) տուրիզմը:
Վերանորոգել Սևքար գյուղի ‘’Չարդուշան” կոչվող անտառմասում գտնվող իրենց կացարանի տանիքը՝ դարձնելով այն ավելի հարմարավետ և հյուրընկալ, ընդունել ավելի շատ հյուրեր և նրանց առաջարկել ավելի որակյալ և լուրջ ծառայություններ:
Այս հյուրընկալությունների ժամանակ հյուրերին կպատմեն մեղրի ստացման, դրա օգտակարության մասին, կցուցադրեն աշխատանքը, մեղրաքամի օրերին հյուրերը նաև հնարավորություն կստանան մասնակցելու մեղրաքամին և տեղում փորձել/ձեռք բերել անարատ մեղր:
Հետագայում հաջողության դեպքում հնարավոր է նաև կազմակերպել և առաջարկել շրջայցեր հարակից տեսարժան վայրերով: Կիրականացվի ապրիլի 20-ից-մայիսի վերջն ընկած ժամանակահատվածում՝ մինչև մեղվաընտանիքների ‘’Չարդուշան” կոչվող անտառմաս տեղափոխելը:

2. Ֆուրշետ ծառայությունների մատուցում, Աշխեն Պետրոսյան, ք. Իջևան

Խումբը Աշխեն Պետրոսյանի գլխավորությամբ ցանկանում է Իջևանում և հարակից գյուղերում ֆուրշետի ծառայություններ մատուցել: Կլինեն ֆուրշետների տարբեր տեսակներ՝ հարսանեկան, գործնական, ֆուրշետ-կոկտեյլ, բրանչ, «միակ ուտեստ», «ըմպանակ» և այլն: Առավելապես կկենտրոնանան հարսանեկան, մանկական ֆուրշետ ծառայությունների վրա, որովհետև Իջևանում հենց այս ծառայությունների պահանջարկն է ավելի շատ: Պահանջարկի դեպքում կաշխատեն նաև այլ տեսակների ուղղությամբ: Մրցասպարեզ կմտնեն առանձնահատուկ ոճով ստեղծելով իրենց խմբի համար շապիկներ՝ լոգոյով, ինչպես նաև կբանեցենեն նոր աշխատելաոճ: Ծրագիրը կիրակնացվի ապրիլից, Իջևանում:

3. Փայտի գեղարվեստական մշակում, Սուրեն Բեգլարյան, ք. Իջևան

Խումբը Սուրեն Բեգլարյանի գլխավորությամբ ցանկանում է զբաղվել փայտի գեղարվեստական մշակմամբ՝ գծագրում, նախագծում և փայտի փորագրություն: Ծրագիրը արդեն իսկ ընթացքի մեջ է, սակայն ամբողջ աշխատանքը կատարվում է ձեռքով:

4. Կոշիկի վերանորոգում, Հայկ Մինասյան, ք. Իջևան

Խումբը Հայկ Մինասյանի գլխավորությամբ ցանկանում են ավելացնել իրենց արդեն իսկ գործող կոշիկի վերանորոգման կետի գործիքները: Սկսելու են վերանորոգում «նոր տեխնոլոգիաներով» այս ձևով կոշիկը նորից գրեթե չի տարբերվի:
Ծրագիրը արդեն իսկ ընթացքի մեջ է, իրականացվում է ք. Իջևանում, Անկախության փողոցում գտնվող կոշակակարանոցում:

5. Ձեռքի աշխատանքներ, Մարինե Խաչիկյան, գ. Կոթի

«Ստեղծագործ ձեռքեր» խումբը Մարինե Խաչիկյանի գլխավորությամբ ցանկանում է մտնել շուկայական դաշտ, Մարինե Խաչիկյանը (կամավորական հիմունքներով) խմբակի պատասխանատուն է: Նրանք հանդես կգան հետևյալ գաղափարներով՝ մանկական հագուստ (1-5 տարեկան աղջիկների համար), տոնական զգեստներ՝ հելյունագործություն և կտորի համատեքստում, յուրաքանչյուր զգեստին համապատասխան աքսեսուար: Արդեն ունեն մոդելավորած 5 զգեստ և 10 աքսեսուար: Ծրագիրն իրականացվում է գ. Կոթիում:

Վանաձորի ԵԲ կոմիտե

Վանաձորի Երիտասարդական բանկն ստացել է 35 ծրագրեր Ալավերդի, Դսեղ, Գարգառ, Մարգահովիտ, Օձուն, Սպիտակ, Նոր Խաչակապ, Ստեփանավան, Վանաձոր, Արևաշող, Ձորագյուղ և Քարինջ համայնքներից:
Մի քանի աշխատանքային հանդիպումների ընթացքում ծավալված քննարկումների արդյունքնում Վանաձորի ԵԲ խմբի կողմից ընտրվել են ստորև բերված 5 ծրագրերը: Ստեփանավանի տարածաշրջանից ընտրվել է 1 ծրագիր, մյուս 3-ը իրականացվելու են Վանաձարում, և 1-ը Ձորագյուղ համայնքում: ԵՀՀ կողմից յուրաքանչյուր ծրագրի համար նախատեսված գումարը պետք է բաժանվի նախապատվության արժանացած ծրագրերի միջև: Այսպիսով ՎԵԲ «Երիտասարդական ձեռներեցության խթանումը ՀՀ մարզերում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կիրականացնի 5 ծրագիր: Ծրագերի մանրամասն նկարագրությունը բերված է ստորև:

1. Gargar-xerox, Վարսենիկ Քալաշյան, գ. Գարգառ

Գարռագ համայնքոում տպիչ և բազմացնող սարքեր /xerox,printer/ գրեթե չկան: Հաճախ մի փաստաթուղթ պատճենահանելու համար մարդիկ ստիպված հասնում են կամ Վանաձոր, կամ Ստեփանավան: Բիզնես պլանի էությունը համայնքում համակարգչային տարբեր ծառայություններ մատուցելն է /տեքստեր տպել, պատճենահանել, բազմացնել, հավաքել, ձևավորել, ձայնագրել տարբեր ֆորմատներով և այլ նմանատիպ ծառայություններ/: Այս կարգի ծառայությունները անհրաժեշտ են ոչ միայն գյուղի ազգաբնակչությանը, այլ նաև դպրոցականներին: Հետագայում կարելի է ավելի լայնացնել բիզնեսի շրջանակները՝ զբաղել գրենական պիտույքների և հուշանվերների վաճառքով և իհարկե իրավական կարգավիճակ ձեռքբերել: Համայնքապետի հետ կա պայմանավորվածություն: Հնարավոր է իրավական կարգավիճակ ստանալու համար պետք լինի 10 000 դրամ, որը կներդնի Վարսենիկ Քալաշյանը:

2. Թեյի և սուրճի մասնագիտացված խանութ, Անդրանիկ Գևորգյան, ք. Վանաձոր

Խումբն Անդրանիկ Գևորգյանի ղեկավարությամբ արդեն 9 ամիս ունի թեյի և սուրճի մասնագիտացված խանութ, որը գործում է քաղաքի ծայրամասերից մեկում՝ Տարոն 4-ում: Ցանկանում են խանութ սրահում ավելացնել ՍՊԱՍՔԻ բաժին, ինչը կօգնի ներգրավել նոր հաճախորդներ և մրցակցային շուկայում որոշակի առավելություններ ձեռքբերել: Դրամաշնորհը նախատեսում են օգտագործել 2016 թվականի ապրիլ- մայիս ամիսներին:

3. Կոշիկի արտադրություն, Տարոն Էլիզբարյան, ք. Վանաձոր

Խումբը մոտ 3 տարի է զբաղվում է կոշիկի արտադրությամբ: Կարում է զինվորական ճտքավոր և կիսաճտքավոր կոշիկներ: Ցանկանում են մեծացնել արտադրության քանակները, արտադրանքի տեսականին ավելացնելու սկսել կարել կանացի և տղամարդու կոշիկներ: Արդեն համապատասխան տարածք կա, կան կարի մեքենաներ: Տեղական շուկայում այս պահի դրությամբ հիմնականում անորակ ապրանքներ են վաճառվում, որոնց գինն էլ որակի համեմատ բարձր է, կամ էլ կոշիկների որակը լավն է, բայց բավականին բարձր գների պատճառով հասանելի չէ շատ մարդկանց: Իսկ խմբի կոշիկները որակական առումով լավն են, գինն էլ համադրելի է լինելու որակի հետ: Ծրագիրը նպաստելու է փոքր ձեռներեցության աճին, տեղական որակյալ արտադրանքից օգտվելու հնարավորություն է տալու: Մնացած պահանջվող գումարը ներդրվելու է սեփական բյուջեից

4. Ստեղծագործական արվեստանոց, Թամարա Մանուկյան, ք. Վանաձոր

Խումբը ցանկանում է ստեղծել փոքրիկ արվեստանոց, որտեղ կտորներից, կաշվից, ուլունքներից և շատ տարբեր իրերից բրոշներ և զարդեր կմշակվեն, կպատրաստվեն: Խմբից երկուսը նկարիչներ են, ովքեր կգծագրեն, իսկ երկուսը կարում և ասեղնագործում են: Մտադիր են այլ ստեղծագործ երիտասարդների նույնպես ընդգրկել թիմ: Ծրագիրը պետք է իրականացվի 2016թվականի ապրիլ ամսից:

5. Անարատ մեղր, Սուրեն Հարությունյան, գ. Զորագյուղ

Սուրենը 14 տարեկանից զբաղվել է մեղվաբուծությամբ, սակայն ներկայումս մեղվաընտանիքների մարման պատճառով դադարեցրել է գործունեությունը: Ցանկություն ունի վերսկսելու, քանի որ այն եկամտաբեր է, ինքն էլ տիրապետում է մասնագիտական գաղտնիքներին: Մեղվաբուծության զարգացումը կնպաստի համայնքում մեղվաբուծության մասայականացմանը: Ներկայումս երիտասարդների կողմից նկատվում է հետաքրքրություն ոլորտի նկահետաքրքրություն ոլորտի նկատմամբ, սակայն սակայն նրանց համարձակությունն ու համարձակությունն ու ֆինանսական միջոցներ ֆինանսական միջոցները չեն ներում: Սուրենի հաջողված փորձը կօգնի նրանց կողմորոշվելու և զբաղվելու այս գործով՝ Սուրենի մասնագիտական աջակցությամբ: Նրան օգնելու է ընկերը, ով արդեն 5 տարի զբաղվում է մեղվաբուծությամբ: Ծրագիրը կիրականացվի 2016 թ. ապրիլ ամսից:

Արմավիրի ԵԲ կոմիտե

1. Ֆուրշետ, Ազնիվ Մանգուշյան, ք. Արմավիր

Ազնիվ Մանգուշյանը, ով մասնակցել է ֆուրշետի և արհեստական դիզայնի դասընթացների, ունի համապատասխան հմտություններ այդ ոլորտում և ցանկանում է ձեռք բերել համապատասխան պարագաներ՝ սեղանի ձևավորմամբ ու ֆուրշետով զբաղվելու համար: Ըստ Ազնիվի՝ Ֆուրշետը կարող է դառնալ համայնքում կատարվող կորպորատիվ միջոցառումների մասը՝ սեմինարներ, ցուցահանդեսներ և այլն, որի ժամանակ նա և իր խումբը ակտիվ մասնակցություն կունենա: Խումբը միջոգառումների ժամանակ

կիրականացնի սեղանների անվճար ձևավորում՝ համայնք բերելով արդի և գեղեցիկ դիզայն, որը երիտասարդությանը կներգրավի համայնքում իրականացվող միջոցառումների նախապատրաստական աշխատանքներին: Բացի այդ խմբի անդամներն իրենք ևս ձեռք կբերեն ձևավորման և ֆուրշետի հմտություններ: Հետագայում խմբի մասնակիցները ցանկանում են կիսվել իրենց փորձով և համայնքի երիտասարդների համար կազմակերպել անվճար դասընթացներ:

2. Գեղեցկության սրահ, Ժենյա Հակոբյան, ք. Արմավիր

Խումբը Ժենյա Հակոբյանի գլխավորությամբ ցանկանում է ընդլյանել իրենց սեփական գործող բիզնեսը՝ գեղեցկության սրահը: Ծրագրի շրջանակներում նրանք ցանկանում են զարգացնել սրահը՝ ձեռք բերելով համապատասխան իրեր և, որ ամենակարևորն է, բացել ևս մեկ աշխատատեղ: Հետագայում նրանք կկազմակերպեն անվճար ակցիաներ և դասընթացներ հաճախորդների և համայնքի բնակիչների համար: Ծրագիրը կիրականացվի 2016 թվականի ապրիլ-մայիս ամիսներին:

3. Մուլտհերոս, Էմմա Աշխատոյան, ք. Արմավիր

Էմմա Աշխատոյանն արդեն 1 տարի է, ինչ մատուցում է մանկական զվարճալի խաղային ներկայացումներով հագեցած ծառայություն, որն իրենից ներկայացնում է մուլտհերոսներով հետաքրքիր ժամանց: Տարբեր աղբյուրներից օգտվելով՝ նա կազմում է ծրագրեր, գրում և մշակում է ինքնուրույն, բայց չունի համապատասխան մուլտհերոսների հագուստներ: Պատվերների դեպքում վարձակալում է հագուստ, որի հետևանքով չի ստանում բավարար եկամուտ: Ծրագրի շրջանակներում նա ցանկանում է ձեռք բերել մուլտհերոսների հագուստ և որոշ ժամանցային պարագաներ ավելի մեծ պահանջարկ ձեռք բերելու համար:
Շուկայում առավել կայուն դիրք գրավելու համար Էմման աշխատանքը կկատարի համեմատաբար մատչելի գնով, համայնքային միջոցառումներում կունենա անվճար և ակտիվ մասնակցություն:

4. Օնլայն Մարկեթինգ, Ասատուր Մարտիրոսյան, ք. Արմավիր

Ասատուր Մարտիրոսյանը ցանկանում է զբաղվել օնլայն մարկեթինգով և առաքմամբ Արմավիր քաղաքում: Քաղաքում կան շատ խանութներ, բայց չկա առաքման համակարգ: Նա կստեղծի վեբ կայք, որտեղից բնակիչները կարող են ընտրել խանութներում վաճառվող ապրանքներ, և կկատարի առաքում հեծանիվով՝ որոշակի գումարի դիմաց: Ըստ իրեն՝ քաղաքում կա նման պահանջարկ, հատկապես այն մարդկանց կողմից, ովքեր ունեն առողջական խնդիրներ, փոքր երեխա կամ խիստ զբաղված գրաֆիկ, իսկ թոշակառու կամ հաշմանդամություն ունեցող մարդկանց համար նա առաքում կկատարի անվճար: Ծրագրի ավարտից հետո Ասատուրը նախատեսում է շարունակել գործը, զարգացնել այս համակարգն Արմավիրում և գումար վաստակել ինքնուրույն:

Մարտունի ԵԲ կոմիտե

1. Հյուրատնային բիզնեսի աջակցություն, Արփինե Գյուլումյան, գ. Գետիկ

Ձեռներեցության խումբը Արփինե Գյուլումյանի ղեկավարությամբ ցանկանում է իրենց պատկանող հյուրատան բակում փոքր տաղավար կառուցել, որտեղ կկարողանան միաժամանակ ընդունել 30 զբոսաշրջիկի: Եթե մինչև հիմա միաժամանակ 6 զբոսաշրջիկից ավել մարդու չէին կարողանում ծառայություններ մատուցել, հիմա արդեն ավելի մեծ խմբեր կընդունեն՝ կազմակերպելով նրանց ժամանցը, ճաշը և ընթրիքը: Նախատեսվում է նաև ձեռք բերել նաև սպասքի մի մասը, քանի որ առկա սպասքը բավարար չէ մեծաքանակ խմբերի սպասարկման համար:
Ծրագիրը կիրականացվի Գետիկ համայնքում:

2. Բեմական հագուստի վարձույթի սրահ, Աստղիկ Գալստյան, ք. Մարտունի

Խումբը Աստղիկ Գալստյանի գլխավորությամբ ցանկանում է Մարտունի քաղաքում հիմնել բեմական հագուստի վարձույթ-սրահ, որտեղից ցանկացողները կարող են բեմական հագուստ իրենց տարատեսակ միջոցառումների համար՝ և՛ մանկապարտեզյան միջոցառումների, ծննդյան տարեդարձների և այլ բեմականացված միջոցառումների համար:
Ծրագիրը կիրականացվի Մարտունի քաղաքում, Մյասնիկյան 34 հասցեում, որը գտնվում է քաղաքային շուկայի հարակից բանուկ տարածքում:
Դրամաշնորհը ստանալուց անմիջապես հետո

Արարատ ԵԲ կոմիտե

1 . Զոդման ապարատ, Արմեն, ք. Արարատ

Արմենը ցանկանում է դիմել դրամաշնորհին որպեսզի ստանա համապատասխան աջակցություն ձեռք բերելու զոդման ապարատ և անհրաժեշտ մալուխներ: Ունենալով փոքրիկ արտադրամաս՝ նա իր ընկերների հետ արտադրում է երկաթյա դռներ, դարպասներ, և ամեն անգամ վարձակալությամբ են վերցնում զոդման ապարատը: Սեփական ապարատի ձեռքբերումը կնպաստի նաև արտադրանքի տեսականու ընդլայնմանը:

2. Ֆոտոստուդիա, Արթուր, ք. Արարատ

Արթուրը լուսանկարիչ է և ցանկանում է բացել իր սեփական ֆոտոստուդիան, քանի որ համայնքում նման ծառայություն չկա: Նա ցանկանում է դիմել ծրագրին և ստանալ ֆինանսական աջակցություն: Իհարկե, գումարի մեծ մասը նա պատրաստվում է ներդնել իր սեփական միջոցները, սակայն դրամաշնորհային գումարը կօգնի նրան ձեռք բերելու տեսախցիկ: Արթուրը պատրաստ է նաև անցկացնելու լուսանկարչական դասընթացներ, և անհրաժեշտության դեպքում միշտ պատրաստ է աջակցել Երիտասարդական Բանկին իր մասնագիտական ունակություններով և ծառայություններով:

3. Ակնոցների խանութ, Արմեն, ք. Արարատ

Արմենը 32 տարեկան է և ունի իր ակնոցների խանութը։ Լսելով ԵԲ դրամաշնորհի մասին՝ նա ցանկանում է դիմել ծրագրին, որպեսզի ձեռք բերի նոր ցուցատախտակներ և ընդլայնի ակնոցների տեսականին։ Այսպիսով դա կնպաստի իր բիզնեսի զարգացմանն ու ընդլայնմանը, քանի որ իր խանութը կդառնա առավել մրցունակ։